ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԻ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
СЕЛО АРАРАТ

Գ. Արարատ Ռ. Վարդանյան 1 ☎ 0234 40305

15. 03 2022թ.

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն

Մամե Հասանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Ինչպես գիտեք 2022թ-ի փետրվարի 16-ին «Արարատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման **ԱՀԱԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/01** պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով որ հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ (պայմանագրի հավելված 3):

Սակայն մեր համատեղ գործունեության առաջին իսկ օրվանից ակնհայտ նկատելի դարձավ Ձեր անփույտ և անպատասխանատու աշխատաոճը, մասնավորապես մատակարարման ծամկետների խախտում, անորակ, ստանդարտներին և պայմանագրի պահանջներին չբավարարող սննդամթերք, հատկապես կաթնամթերքի մատակարարում և այլն:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ մենք գործ ունենք մանկահասակ երեխաների հետ, ինչպես նաև հիմք ընդունելով **ԱՀԱԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/01** պայամանագրի 2.1.7 կետը, մենք որպես գնորդ որոշում ենք լուծել պայմանագիրը ամբողջությամբ և ձեռնարկելու ենք պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ, պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները «Արարատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Արարատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Գ. Գասպարյան